

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից բավարարվածության ուսանողական հարցման արդյունքների վերլուծություն /2015-16 ուստարի/

Ցանկացած բուհի գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է այն հանգամանքից, թե որքանով են բավարարվում ներքին շահակիցների, տվյալ դեպքում ուսանողության օբյեկտիվ և սուբյեկտիվ կարիքները: Այն կապված է բուհական համակարգի կառուցվածքային տարրեր տարրերի շահախնդիր գործունեության հետ, որոնցից բավարարվածության աստիճանը, լինելով ուսումնական ակտիվության իրական խթան, միաժամանակ հենց այն սուբյեկտիվ ցուցանիշն է, որով ուսանողները գնահատում են այդ կառույցների փոխհամաձայնեցված գործունեության արդյունավետությունը: Բավարարվածությունը բացահայտելու նպատակով, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի մասնագետների կողմից, 2016 թվականի ապրիլ-մայիս ամիսների ընթացքում անց է կացվել հերթական հարցումը: Հարցման ժամանակահատվածը պատահաբար չի ընտրվել: Դա երկրորդ կիսամյակի միջնամասն է, երբ ուսանողությունը դեռևս խիստ մտահոգված չէ առաջիկա քննաշրջանով, իսկ առաջին կուրսեցիները արդեն մեկ կիսամյակի ուսումնառության ու քննաշրջանի փորձ ունեն: Այսինքն, օբյեկտիվորեն և հոգեբանական համեմատաբար խաղաղ վիճակում բոլոր կուրսերի ու ֆակուլտետների ուսանողները կարող են գնահատել բուհի տարրեր կառույցներից ստացած տպավորությունները:

Մասնաճյուղի գործունեության տարրեր կողմերից ուսանողների բավարարվածության հարցման ներկայացուցչությունը ապահովելու համար իրացվել են հետևյալ քայլերը:

Նկատի ունենալով հարցման բնույթը, մասնավորաբար այն, որ հարցաշարում ուսանողներն ընդհանուր գնահատականներ են տալու մասնաճյուղի տարրեր ստորաբաժանումների գործունեությանը, նպատակահարմար է համարվել կիրառել քվոտային ընտրանքի մեթոդը: Հիշեցնենք, որ, ըստ տվյալ մեթոդի, առանց Մեծ թվերի օրենքի պահանջը խախտելու, այն է՝ ցանկացած ուսանողի հարցման մեջ ընտրվելու հավասար հնարավորությունը, համամասնորեն ընտրվել են ցանկալի որակներով (սեռը, կուրսը, առաջադիմությունը) ուսանողներ: Դրա համար նախ կազմվել է բոլոր ուսանողների ցուցակները համապատասխան ֆակուլտետների համար: Ըստ բավարար մեծ թվերի աղյուսակի ընտրվել է ուսանողների այն քանակությունը (384 ուսանող), որը համապատասխանում է 5,0 տոկոս թույլատրելի սխալի և հետևությունների 95,0 տոկոս հավանականության պահանջներին: Այնուհետև յուրաքանչյուր ֆակուլտետի համար համամասնորեն որոշվել է հարցվելիք ուսանողների թիվը: Ուսանողների ընդհանուր թիվը մասնաճյուղում հավասար է՝ 1693-ի, որոնցից համադրելով ֆակուլտետներում ուսանողների ընդհանուր թվերը, հաշվարկել է հարցվելիք ուսանողների քանակը.

	Ֆակուլտետ	Ուսանողների ընդհանուր թիվը	հարցվելիք ուսանողների թիվը
1	Բնական գիտությունների	88	22
2	Հումանիտար գիտությունների	333	80
3	Տնտեսագիտության	161	39
4	Կիրառական արվեստի	84	20
5	Հեռակա ուսուցման բաժին	1027	240
Ընդամենը՝		1693	401

Հեռակա ուսուցման բաժնի համար այդ թիվը պետք է կազմեր 240 ուսանող: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ, հատկապես առաջին և երկրորդ կուրսի հեռակա ուսուցման ուսանողությունն անհամեմատ ավելի քիչ է հաղորդակցվում մասնաճյուղի տարբեր կառույցների հետ (թերևս բացառությունը տվյալ բաժնի դեկանատն է), հարցման հեղինակները բավարարվել են բարձր կուրսերի 117 ուսանողների հարցումով:

Հաջորդ քայլով հաշվարկվել են ուսանողների քանակն ըստ սեռի, կուրսի և առաջադիմության (բարձր, միջին, ցածր տարբերակումներով): Դրանցից համամասնորեն ընտրվել են որոշակի սեռի, կուրսի և առաջադիմության հարցվող ուսանողների քանակությունները: Օրինակ, ենթադրենք Բնական գիտությունների ֆակուլտետի 22 հարցվելիք ուսանողներից առաջին կուրսից պետք է հարցվի 2 աղջիկ՝ բարձր առաջադիմությամբ, 1-ը՝ միջին, 1-ը ցածր: Նույնը տղաների համար կազմել է՝ 0, 1, 2՝ համապատասխանաբար: Երկրորդ կուրսից՝ աղջիկ՝ 1, 2, 1, տղա՝ 1, 2, 1: Երրորդ կուրսից՝ աղջիկ՝ 2, 0, 0, տղա՝ 0, 0, 1: Չորրորդ կուրսից՝ աղջիկ՝ 2, 0, 0, տղա՝ 0, 2, 0, ընդամենը՝ 22 ուսանող: Այսպես նաև մյուս ֆակուլտետների համար: Պատահական ընտրությունը կատարվել է վերջին փուլում: Օրինակ, եթե Կիրառական արվեստի ֆակուլտետի երկրորդ կուրսի բարձր առաջադիմությամբ 9 ուսանողուհիներից պետք է հարցվեն 3-ը, նրանց ընտրում ենք պատահաբար՝ վիճակահանությամբ կամ այբբենական ցուցակից յուրաքանչյուր երրորդին:

Վերջին քայլով պատահական ընտրության միջոցով ընտրվում են որոշակի ուսանողներ և նրանց խնդրում ենք պատասխանել հարցաշարի հարցերին: Չնայած հարցումն անանուն է և կազմակերպիչներին հետաքրքրում են ընդհանրացված վիճակագրական գնահատականները, այդուհանդերձ, տվյալների հավաստիությունը մեծացնելու շարժառիթով ուսանողների սեռը, կուրսը և առաջադիմությունը նշել են զրուցավարները:

Հարցաշարում հարցեր են, որոնք բացահայտում են ուսանողների տեղեկացվածությունը և բավարարվածությունը խորհրդատվական ծառայություններից, կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքից, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, ֆակուլտետում կարիերային նպաստող աշխատանքներից, ուսանողների իրավունքները պաշտպանող պատասխանատուների, ուսանողական խորհրդի աշխատանքներից, օրինականության պահպանման և ուսանողների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի աշխատանքներից, էլեկտրոնային կայքից:

Բավարարվածությունը գնահատվել է 5-միավորանոց սանդղակով, որտեղ 1-ը ամենացածր, իսկ 5-ը՝ ամենաբարձր գնահատականն է:

Ուստարի	Հարցմանը մասնակցած ուսանողների թիվը	Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներ			Ուսումնական խորհրդատու		
		տեղեկացվածություն/ %	ընդգրկվածություն/ %	բավարարվածություն/գն.	տեղեկացվածություն/ %	բավարարվածություն/ գն.	
2014-15	387	66,15%	31,01%	79,8% : 3,99	93,54%	96% : 4,8	
2015-16	158	55,70%	34,1%	77,2% : 3,86	93,04%	92,8% : 4,64	

Ներկայացնենք հարցումից ստացված տվյալները, որոշակի մեկնաբանություններով: Հետևյալ աղյուսակում բացարձակ թվերով և տոկոսներով բերված են խորհրդատվական աշխատանքների,

ծառայությունների մասին, լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում ուսանողների իրազեկվածության և ընդգրկվածության վերաբերյալ տվյալները:

Նախ ասենք, որ հայաստանյան կրթական համակարգի ներկա զարգացումներում կրթության որակի բարձրացման կարևոր գործոններից մեկը համարվում է սովորողների ինքնուրույնության զարգացումը, ինքնակրթությունը: Դրա իրացման գլխավոր պայմաններից մեկը կրթության կազմակերպիչների կողմից հնարավոր պայմանների ստեղծումն է, տվյալ ցանկության իրագործմանն օժանդակումը: Ահա լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների ինստիտուտի ներմուծումը, ուսանողների կողմից պահանջարկի դեպքում դասախոսների, մասնագետների հետ լրացուցիչ հանդիպումների հնարավորության ստեղծումը, դրանց պարտադիր ու պարբերական գործառնական ապահովումը հենց այն ուղին է, որը կարող է բերել ուսանողների ինքնակրթության զարգացմանը: ԵՊՀ ԻՄ-ի ղեկավարությունը տվյալ հարցին նվիրում է կարելվոյն լուրջ ուշադրություն: Դրա դրսևորումներից մեկն էլ վերջին տարիների հարցումներում երևույթի հանդեպ դրսևորած ուշադրությունն է:


Ինչպես ցույց են տալիս տվյալները, մասնաճյուղի մասշտաբով դրսևորվել է բարձր իրազեկվածություն, հատկապես խորհրդատվական աշխատանքների, ծառայությունների վերաբերյալ: Առկա ուսուցման հարցմանը մասնակցած 158 ուսանողից 147-ի տեղեկացվածությունը, ինչը կազմում է 93% տպավորիչ է: Էլ ավելի տպավորիչ է Տնտեսագիտության և բնական գիտությունների ֆակուլտետների 100% տեղեկացվածությունը: Նկատի ունենալով հեռակա ուսուցման յուրահատկությունը, կապված խնդրո առարկայի հետ, թերևս բարձր պետք է համարել նաև իրազեկվածությունը՝ 78 ուսանող հարցված 117-ից, իսկ 48-ը տեղյակ են նաև լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների մասին: Համեմատաբար պակաս, սակայն նորից բաժր է լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների վերաբերյալ առկա ուսուցման հարցմանը մասնակցած ուսանողների տեղեկացվածությունը՝ 71,8%-75,0%, բացի մի ֆակուլտետից՝ Հումանիտար գիտությունների, որտեղ այն կազմել է 38,8%: Սրա համեմատ մեծ չէ այն ուսանողների թիվը, ովքեր ընդգրկված են լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում: Առկա ուսուցման Տնտեսագիտության և Բնական գիտությունների ֆակուլտետներում ընդգրկված են 3 ուսանողից մեկը, իսկ մյուս երկուսում՝ 10-ց մեկը: Հեռակա ուսուցման 117 հարցված ուսանողից լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում ընդգրկված են 19 ուսանող:

Ինչպիսի հետևություն կարելի է անել այս տվյալներից: Նախ պետք է ասել, որ իրազեկվածության համեմատ պակաս ընդգրկվածությունը դեռևս բացասական որակումների հիմք չէ: Կարծում ենք, որ երևույթն ունի բազմաբնույթ պայմանավորվածություն: Մանավանդ, որ շատ բարձր է ուսանողների բավարարվածությունը կուրսատորների, կուրսղեկների աշխատանքից ու ծառայություններից՝ առկա ուսուցման համար այդ թիվը կազմում է 4,64, հեռակա ուսուցման համար՝ 4,56: Բարձր է համարվում նաև լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներից բավարարվածությունը (3,86՝ առկա, 3,58՝ հեռակա ուսուցման համար):

Այս ամենը խոսում է այն մասին, որ խորհրդատվության հնարավորությունների վերաբերյալ ուսանողների իրազեկվածությունը, այդ հնարավորությունների օգտագործումը առկա և հեռակա ուսուցման ուսանողների կողմից և պատասխանատուների(դասախոս, կուրսղեկ, ամբիոն, ֆակուլտետ) գործունեությունից իրենց բավարարվածությունը կարող են ունենալ ամենատարբեր պատճառներ և հիմնավորումներ:

Այսպես, օրինակ, մեր ընտրանքում հնարավոր են ուսանողներ, որոնք առանձնապես մեծ ձգտում չունեն մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու, ունեն ոչ համարժեք մասնագիտական կողմնորոշում, առանձնապես չեն հետաքրքրվում մասնաճյուղի ծառայությունների հնարավորություններով, դրանցից օգտվելու իրենց ցանկությամբ և կարողությամբ: Հակառակը, կարող են լինել այնպիսիք, որոնք ունեն բարձր առաջադիմություն, ինքնագիտակցության բարձր մակարդակ և ինքնակրթությունը համարժեքորեն գնահատող են: Այդ պատճառով նրանք առանձնապես կարիք չունեն լրացուցիչ խորհրդատվության: Ոչ այնքան բարձր իրազեկվածության, տվյալ պարապմունքներին մասնակցության ոչ ցանկալի որակի ու քանակի հարցում որոշակի պատասխանատվություն կարող են ունենալ առանձին դասախոսները, ամբիոնները: Փաստարկների այս շարքը կարելի է շարունակել, սակայն ասվածն էլ թերևս բավարար է կատարելու այն հետևությունը, թե ԵՊՀ ԻՄ-ում ուսանողության գերակշիռ մասը հստակորեն իրազեկված է խորհրդատվական ծառայությունների ու դրանցից օգտվելու հնարավորությունների մասին և շատ բարձր է գնահատում նրանց գործունեությունը: Միաժամանակ տվյալները վկայում են, որ սույն ասպարեզում կատարելագործվելու ռեսուրսները սպառված չեն: Հետագա ուսումնասիրությունները պետք է նպատակաուղղված լինեն բացահայտելու այն գործոնները, որոնք կարող են նպաստել բոլոր ուսանողների իրազեկմանը և, ցանկության դեպքում՝ ընձեռնված հնարավորություններից լիարժեքորեն օգտվելուն:

Դիագրամում բերված են ուսուցման գործընթացի հետ անմիջականորեն առնչվող ոլորտների գործունեությանը հարցված ուսանողների տված բարձր և շատ բարձր գնահատականները՝ բացարձակ թվերով և տոկոսներով: Ինչպես տեսնում ենք տվյալները տպավորիչ են: Նշենք մի քանիսը: 150 պատասխաններից 133-ում (այն կազմում է 88,7%) ուսանողները շատ բարձր և բարձր



են գնահատել ընթերցասրահի հարմարավետությունը, 151 ուսանողից 131-ը շատ բարձր և բարձր են գնահատել մասնաճյուղում սանիտարահիգիենիկ վիճակը (86,8%), 148 ուսանողից 127-ը բուհի գիտամշակութային կյանքը գնահատել են շատ բարձր և բարձր (85,8%): Մենք նշեցինք ամենաբարձր գնահատականները: Մնացած՝ լսարանների կահավորվածությունը, բուժկետի ծառայությունը, սննդի և հանգստի պայմանները, ջեռուցումը, անվտանգության ապահովման համակարգը, մասնաճյուղում էթիկայի նորմերի պահպանումը արժանացել են նույն կարգի գնահատականների (5-9 տոկոս շեղումներով): Այստեղ թերևս բացառությունը մասնագիտական գրականության առկայությունից բարձր բավարարվածության 66,9% տոկոսն է, որը իրոք բարձր է և այդպես է ընկալվում զուտ մնացածի հետ համեմատած (151 ուսանողից 101-ը գնահատել է բարձր և շատ

բարձր): Այդուհանդերձ 18 հոգու ցածր և շատ ցածր (մոտ 12%) և 33 հոգու (22%) միջին գնահատականներն ուշադրության արժանի են: Իսկ ընդհանուր առմամբ գերբարձր գնահատականները կարծում ենք օբյեկտիվորեն արտացոլում են այն ակնհայտ առաջընթացը, որը 1990-ական թթ. համեմատ ունեցել է մասնաճյուղը, կապված հենց նրա գործունեության համար առանցքային նշանակություն ունեցող՝ անմիջականորեն ուսուցման գործընթացի կազմակերպման և անցկացման ոլորտում: Առանց մերժելու մյուս, այսպես կոչված «ինֆրակառուցվածքային» ոլորտների կարևորությունը, հարկավոր է խոստովանել, որ մասնագետների պատրաստման հարցում նշված ռեսուրսներն ունեն առանցքային նշանակություն: Ուրեմն պատահական չեն այն, գործնականում իդեալականին ձգտող գնահատականները, որը ուսանողները տվել են մասնաճյուղի կառավարման ստորաբաժանումներին՝ տնօրենությանը, ուսումնամեթոդական վարչությանը, անձնակազմի կառավարման բաժնին, հաշվապահությանը, վարչատնտեսական վարչությանը, գրադարանին:

Ստորաբաժանում	Դիմել են		Բավարարվածությունը			
	2014-15	2015-16	2014-15		2015-16	
տնօրեն	19,1%	24,7%	4,61	92,1%	4,58	91,6%
ուսումնամեթոդական վարչություն	20,4%	31,6%	4,58	91,5%	4,56	91,2%
վարչատնտեսական վարչություն	15,2%	20,3%	4,41	88,3%	4,45	88,9%
հաշվապահություն	53,2%	69,6%	4,49	89,8%	4,58	91,5%
գրադարան	86,8%	94,9%	4,52	90,3%	4,61	92,2%
Հարցմանը մասնակցած ուսանողների քանակը	387	158	387		158	

Այս գնահատականները, ինչպես տեսնում ենք, 90 և ավելի տոկոս են, իսկ ցածր գնահատականները չեն գերազանցում 2-3%-ը:

Հարցումներն այնքանով են կարևոր, որ գիտական հիմնավորում են տալիս սուբյեկտիվ գնահատականներին: Բավական է փոքրիշատե տեղյակ լինել բուհական կյանքին, ուսումնագիտական գործընթացներին, դրանց կազմակերպման ու անցկացման նրբություններին, անյուևետև մի քանի օր շրջել մասնաճյուղի տարբեր ֆակուլտետներում, մասնաշենքերում, դիտել լսարաններում ու միջանցքներում տիրող կրթական ու բարոյահոգեբանական մթնոլորտը, որպեսզի համոզվեք, որ գտնվում ենք ժամանակակից կրթօջախում՝ ցանկացած իմաստով: Այն ավելի ցայտուն է դառնում, երբ մտովի համեմատում ենք ուրիշ մի շարք նմանօրինակ բուհերի հետ: Իրազեկվածներն այդ պատճառով չեն զարմանում, որ մասնաճյուղը ընթացիկ տարում ունեցավ հանրապետությունում լավագույն ընդունելություններից մեկը: Ասվածը գերազանցատական չէ նաև այն պատճառով, որ էապես չի տարբերվում մասնաճյուղին՝ մայր բուհի ղեկավարության, անձամբ ռեկտորի կողմից տված գնահատականից:

Հետևաբար, ելնելով հարցման արդյունքներից կարելի է պնդել, որ ուսանողության գիտակցության մեջ ավելի շատ իշխում է այն կարծիքը, թե ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը ներկայումս կառավարվում է հիմնականում բանիմաց ու բարյացկամ ղեկավար կադրերի կողմից, որոնք, առանց էական թերությունների ու վրիպումների ձգտում և կարողանում են ապահովել կառավարչական ստորաբաժանումների անխափան գործունեությունը:

Սույն առնչությամբ հատկանշական են նաև մասնաճյուղի կայքի կառավարմանը տրված գնահատականները: Սրանք ուսանողների գնահատականներում նույնպես ամենաբարձրերից են.


Հաճախ եք օգտվում կայքից												%	
Ուսման ձևը	Ուս. քանակը /առկա/	չեն նշել		շատ հաճախ		հաճախ		երբեմն		հազվադեպ		օգտվ. հաճախ.	
2014-15	362	12	3,3%	106	29,3%	125	34,5%	87	24,0%	32	8,8%	231	63,8%
2015-16	158	5	3,2%	41	25,9%	64	40,5%	39	24,7%	9	5,7%	105	66,5%

Կառավարման գործընթացի թափանցիկության, աշխատակիցների և սովորողների իրազեկվածության ապահովման, գործունեության և ուսման մեջ տեղեկայթի փոխանակման տեսանկյունից անհնար է թերագնահատել կայքի, որպես աշխատանքի արդյունավետության գերժամանակակից գործոնի դերը: Ի պատիվ այս գործի պատասխանատուների, նրանց արհեստավարժ ու նվիրված գործունեության, ընդամենը 5 տարվա պատմություն ունեցող մասնաճյուղի կայքը դարձել է մասնագետների պատրաստման գործընթացում ուսանողների «սիրելին»: Ըստ մեր տվյալների, կայքից շատ հաճախ և հաճախ օգտվում են առկա ուսուցման հարցման 158 մասնակիցների 66,5%-ը (105 ուսանող), երբեմն՝ 4-ից 1-ը, և հազվադեպ ընդամենը 9 հոգի (5,7%, այսինքն մոտ 16-ից 1-ը): Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա նմանատիպ հարցման մեջ Կայքից հազվադեպ են օգտվել կամ գրեթե չեն օգտվել ուսանողների՝ 7-ից մեկը:

Այսինքն մեկ ուսումնական տարվա մեջ տեղի է ունեցել զգալի որակական աճ մասնաճյուղի կայքից օգտվելու հարցում: Հինգ բալանի սանդղակով հիմնականում 4,5-ից բարձր գնահատականները, որոնք համարվում են շատ բարձր գնահատական գրեթե բոլոր ֆակուլտետների, կուրսերի ու հատկապես, գերազանց ու լավ ուսառաջադիմություն ունեցող ուսանողների կողմից հավաստում են, որ գրավիչ ու մատչելիությունը ապահովող կառուցվածքով լիարժեք տեղեկայթի մատուցումը բուհական կյանքի նորությունների, նախատեսվող ու անցկացվող բազմաբնույթ միջոցառումների, գիտաուսումնական ոլորտում ձեռքբերումների մասին կայքը դարձրել են մասնաճյուղի գործունեության արդյունավետության ապահովման գրեթե անփոխարինելի միջոցի.

h	Բավարարվածությունը կայքի /առկա/.	Միջ.գն.	Բն/Գ	Կ/Ա	Հում/Գ	Տնտ/Գ
22.1	կառուցվածքից,	4,71	4,80	4,53	4,70	4,78
22.2	տեղեկատվության ստացման հարմարավետությունից,	4,62	4,80	4,32	4,58	4,76
22.3	տեղեկատվության լիարժեքությունից,	4,55	4,65	4,21	4,55	4,68
22.4	նորությունների լուսաբանումից,	4,65	4,75	4,58	4,58	4,76
22.5	ընդհանուր գրավչությունից:	4,39	4,60	4,05	4,40	4,43

Միաժամանակ համոզված ենք, որ պատասխանատուները չեն մոռանում, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը ամենաարագ փոփոխվողներից է և պահանջում է վերապատրաստման ու վերաորակավորման ամենօրյա պատրաստակամություն՝ կայքի պատասխանատու մասնագետների կողմից, համապատասխան տեխնիկական միջոցների նորացման պատրաստակամություն՝ մասնաճյուղի ղեկավարության կողմից, և, որ պակաս կարևոր չէ, տվյալ ոլորտի նորամուծություններին շահախնդրորեն ծանոթանալու և օգտվել կարողանալու պատրաստակամություն՝ օգտագործողների (տվյալ դեպքում սովորողների) կողմից:



Մեր հանրապետության գրեթե բոլոր բուհերում օրավուր էլ ավելի արդիական ու հրատապ է դառնում ձևավորված «Շրջանավարտների ու կարիերայի կենտրոնների» աշխատանքը: Գաղտնիք չէ, որ, ի տարբերություն խորհրդային կրթակարգի, որտեղ շրջանավարտների աշխատանքի տեղավորվելու խնդիրը լուծված էր, ներկայումս այդ հնարավորությունը հասնում է նվազագույնի: Պատճառները առավելապես օբյեկտիվ են: Դրանք կապված են և մասնավոր սեփականատիրական հարաբերությունների, և նոր աշխատաշուկայի յուրահատկությունների, և հանրապետության կրթական համակարգի զարգացումների, դրա յուրովի միջազգայնացման, և Հայաստանի ռազմաքաղաքական ներկա իրավիճակի հետ և այլն: Սրանց մանրամասն դիտարկումը պահանջում է հատուկ ուսումնասիրություն: Այստեղ ընդամենը նշենք, որ մասնաճյուղն իրապես մտահոգված է իր շրջանավարտների աշխատանքի տեղավորման, աշխատանքում առաջխաղացման խնդիրներով: Այդ պատճառով ձևավորված «Շրջանավարտների ու կարիերայի կենտրոնի» գործունեությունը ղեկավարության կողմից խիստ կարևորվում է, ինչի համար հարցաշարում ընդգրկվել են հարցեր, որոնց նպատակն է պարզել ուսման ընթացքում աշխատանքային հնարավորությունների վերաբերյալ տվորողների իրազեկվածության, սեփական գործունեության ոլորտը ընտրելու և ապագա աշխատանքի օգուտներն ու վնասները գնահատելու հարցում անձնական մասնակցության մակարդակը:

Թիվ	Հարց	%		Բն/Գ		Կ/Ա		Հում/Գ		Տնտ/Գ	
		158		20		19		80		39	
9	Տեղեկացվա՞ծ եք արդյոք Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի մասին:	12,7%	20	15%	3	5,3%	1	10%	8	20,5%	8
10	Օգտվո՞ւմ եք արդյոք կենտրոնի ծառայություններից:	30%	6	66,7%	2	0%	0	37,5%	3	12,5%	1
13	Ներգրավվա՞ծ եք եղել արդյոք ֆակուլտետում իրականացված կարիերային նպաստող աշխատանքներում:	24,7%	39	45%	9	36,8%	7	23,8%	19	10,3%	4

Աղյուսակում բացարձակ թվերով ու տոկոսներով, ամփոփ տեսքով բերված են Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի մասին առկա ուսուցման հարցված ուսանողների իրազեկվածության, նրա ծառայություններից օգտվելու և տվյալ ուղղությամբ ֆակուլտետում իրականացվող աշխատանքներում մասնակցության վերաբերյալ տվյալները: Ինչպես տեսնում ենք ֆակուլտետների և ընդհանուր կտրվածքով տվյալները բավական ցածր են: Առկա ուսուցման 158 ուսանողից միայն 20-ն են տեղյակ կենտրոնի գոյության մասին, նրա ծառայությունից օգտվում են 6-ը, իսկ ահա

Ֆակուլտետում իրականացվող կարիերային նպաստող աշխատանքներում ներգրավված են երկու անգամ ավելի շատ՝ 39 ուսանող: Եթե ընդունենք, որ ուսանողության գերակշիռ մասի իրազեկվածությունը և նրա ծառայություններից օգտվելը կարևոր հանգամանք է հենց իր, ուսանողության համար, կարող ենք համարել, որ տվյալները պատշաճից ցածր են: Պատճառները կարող են ամենատարբեր լինել: Մի դեպքում դա կարող է լինել իրենց իսկ սովորողների որոշակի պասիվությունը, երկչոտությունը, կապված սեփական գործունեությունը և աշխատանքային նպատակները ինքնուրույն տնօրինելու կարևորության ոչ պատշաճ ըմբռնման հետ: Երկրորդ դեպքում դա կարող է լինել ուսանողների ոչ բավարար ներգրավվածությունը մասնաճյուղի խնդիրների լուծման գործում: Երբ համեմատում ենք տարբեր կուրսերի պատասխանները, տեսնում ենք, որ առաջին և երկրորդ կուրսի հարցվածները վիճակագրորեն ավելի քիչ իրազեկվածություն են դրսևորել (12,5%), քան բարձր՝ երրորդ և չորրորդ կուրսեցիները՝ (23%): Եվ կամ, ուսանողուհիների մոտ այդ թիվը կազմում է 15%, իսկ ուսանողների մոտ՝ 22%: Կարծում ենք սա էլ է բնական, քանզի ցածր կուրսեցիները (հատկապես առաջին) դեռ չեն հասցրել լիարժեքորեն հարմարվել բուհական կյանքին, իսկ աղջիկների սոցիալական ակտիվությունը, թերևս իներցիայով տղաների համեմատ վիճակագրորեն փոքր ինչ ցածր պետք է լինի, հավելած՝ էթնոմշակութային որոշակի «ամոթխածությունը»: Երրորդ պատճառ կարող է լինել մասնաճյուղի կենտրոնի հետ գործատուների ոչ բավարար փոխգործակցությունը և այլն: Այսինքն, եթե ունենք խնդիր, դրա լուծման գործնական առաջարկների համար այստեղ առաջանում է երևույթի ավելի խորը հետազոտման անհրաժեշտություն:

Թիվ	Ուստարի	Հարցմանը մասնակցած ուսանողների թիվը	Շրջանավարտների և կարիերայի կենտրոն			Ֆակուլտետում իրականացված կարիերային նպաստող աշխատանքներ		
			տեղեկացվածություն/ %	օգտվել/ %	բավարարվածություն/գն.	Ներգրավվածություն %	բավարարվածություն/գն.	
1	2014-15	387	34,1%	10,9%	74,6% : 3,73	28,7%	81,2% : 4,06	
2	2015-16	158	12,7%	30%	70% : 3,5	24,7%	90% : 4,5	

Մասնաճյուղը առանձնակի է կարևորում ուսանողական խորհուրդների դերը: Քանզի, որպես կայացած ինստիտուտ այն առանցքային դեր ունի ղեկավարության, դասախոսական անձնակազմի ու սովորողների միջև հետադարձ կապի ապահովման խնդրում: Հատկանշական է, որ սույն հարցում ուսումնասիրությանը մասնակցած ուսանողները դրսևորեցին բարձր իրազեկվածություն: Այսպես, տվյալ հարցին դրական է պատասխանել առկա ուսուցման 158 ուսանողից 137-ը (86,7%), իսկ հեռակայի 117 ուսանողից՝ 48-ը: Ըստ որում, ուսխորհրդի ծառայություններից օգտվում են հարցմանը մասնակցած առկա ուսուցման 97 ուսանող (70,8%) և հեռակա ուսուցման՝ 25 ուսանող (52,1%), որոնք շատ բարձր են գնահատում նրա գործունեությունը: Այսպես, ուսխորհրդի գործունեությունից բավարարվածության հարցին պատասխանած 81 ուսանողից այն բարձր և շատ բարձր են գնահատել 72-ը, ինչը կազմում է 88,9%: Ցածր և շատ ցածր են գնահատել ընդամենը 5 ուսանող (6,1%):

Հարցմանը մասնակցած ուսանողների քանակն ըստ մասնագիտությունների/առկա/		158	20	19	80	39
18.1	Ձեր բավարարվածությունը ուսանողական խորհրդի աշխատանքից	Միջ.գն.	Բն/Գ	Կ/Ս	Հում/Գ	Տևտ/Գ
		4,41	4,94	4,45	4,26	4,11

Այստեղ էլ մենք նշմարում ենք օրինաչափության միտում: Օբյեկտիվ փաստ է, որ մասնաճյուղի ուսանողական խորհուրդը ուսումնական տարվա ընթացքում անց է կացնում բազմաթիվ տարաբնույթ միջոցառումներ, որին շատ ուսանողներ մասնակցում են հաճույքով: Նրա գործունեությունը, հասկանալի պատճառով, մյուս կառույցների համեմատ շատ ավելի տեսանելի է հենց ուսանողությանը, և եթե այդ գործունեությունը շոշափում է նրանցից շատերի ուսումնական և հոգևոր շահերը, նրանք չեն զլանում կատարված աշխատանքները բարձր գնահատել: Սույն համատեքստում թերևս կարևոր է նաև նշել, որ նախորդ տարվա նմանօրինակ հարցման համեմատ առկա ուսուցման համակարգում և տեղեկացվածության, և, հատկապես ուսխորհրդի ծառայություններից օգտվելու հարցում ամրագրվել է զգալի առաջընթաց:

Թիվ	Ուստարի	Հարցմանը մասնակցած ուսանողների թիվը	օրինականության պահպանման և ուս. իրավունքների պաշտպանման հանձն			Ուսանողական խորհուրդ			
			տեղեկացվածություն/ %	օգտվել/ %	բավարարվածություն %/գն.	տեղեկացվածություն/ %	օգտվել/ %	բավարարվածություն %/ գն	
1	2014-15	387	93,54%	19,64%	75% : 3,75	82,43%	43,67%	83%	4,15
2	2015-16	158	46,84%	25,95%	87,4% : 4,37	86,71%	70,8%	88,2%	4,41

Եթե 2014-15 ուս տարվա հարցման մեջ օգտվողները կազմում էին 43,7%, ապա 2015-16 ուս տարում այդ թիվն արդեն կազմել է 61,4%: Համեմատաբար ավելի ցածր են Օրինականության պահպանման և ուսանողների իրավունքների պաշտպանման հանձնաժողովի տվյալները. իրազեկվածությունը՝ 46,8%, իսկ նրա ծառայություններից օգտվելը՝ 25,9%: Հատկանշական է, որ այստեղ ևս բավարարվածությունը շատ մեծ է՝ 87,4%: Հնարավոր է, որ շատ ուսանողներ իմանան հանձնաժողովի, նրա հնարավորությունների մասին, սակայն առիթ կամ պատճառ չունենան դիմելու հանձնաժողովի օգնությանը: Բացառված չեն նաև այն դեպքերը, երբ որոշ ուսանողներ կարիք ունենան դիմելու հանձնաժողովին, սակայն, հույս չունենան, որ իրենց խնդիրներին կարձագանքեն համարժեքորեն: Այստեղ, թերևս որոշակիություն կմտցվեր, եթե հայտնի լիներ հանձնաժողովին դիմելու դեպքերի քանակությունը և ծառայության արձագանքներից բավարարվածության աստիճանը, այնպես, ինչպես դա արել ենք վարչական կառույցների գործունեության գնահատման ժամանակ:

Ամփոփելով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից ուսանողության բավարարվածության վերաբերյալ հարցման արդյունքները (2016թ.) կարող ենք նշել հետևյալը.

- Մասնաճյուղի ռեսուրսներից և ծառայությունների (ներառյալ կայքը և ուսանողական խորհուրդը) վերաբերյալ տեղեկացվածության ու նրանց գործունեությունից բավարարվածության տվյալների համադրումը վկայում է, որ ԵՊՀ ԻՄ ուսանողության հասարակական գիտակցության մեջ ակնհայտորեն գերիշխող է այն կարծիք-գնահատականը, թե բուիը կառավարվում է հիմնականում արհեստավարժ անձանց և ստորաբաժանումների կողմից՝ Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի զարգացումներին համահունչ և ժամանակակից պահանջներին համապատասխան;
- Մասնաճյուղի կայքի կառավարմանը տված բարձր գնահատականները վկայում են, որ այն իրապես դարձել է ուսումնական և ճանաչողական գործընթացների բաղադրատարր, գիտելիքների ձեռքբերման և մասնաճյուղի առօրյայի մասին լիարժեք իրազեկվածության արդյունավետ միջոցներից մեկը;

- Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա են որոշակի օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմնախնդիրներ, կապված «Օրինականության պահպանման և ուսանողների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի», ինչպես նաև «Շրջանավարտների ու կարիերայի կենտրոնի» գործունեության մասին ուսանողության իրազեկվածության և նրանց ծառայություններից օգտվելու հետ, այն դեպքում, երբ օգտվողները բարձր բավարարվածություն են արտահայտում այդ ծառայություններից:

Ելնելով վերոնշյալից առաջարկվում է.

- Հարցման տվյալների և դրանց վերլուծության մասին իրազեկել ինչպես ուսանողությանը, այնպես էլ այն բոլոր կառույցների աշխատակազմին, որոնց գործունեությունը շոշափվել է հարցաշարում;
- Առանձին քննարկել «Օրինականության պահպանման և ուսանողների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի», ինչպես նաև «Շրջանավարտների ու կարիերայի կենտրոնի» գործունեությունը, հայտնաբերելու համար այդ ծառայությունների առկայության մասին ոչ բավարար իրազեկվածության և նրանցից պակաս օգտվելու օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները;
- Քննարկման արդյունքները համադրելով և մասնաճյուղի ղեկավարության հետ համաձայնեցնելով նշել որոշակի ուղիներ, որոնք թույլ կտան բարձրացնել իրազեկվածությունը վերոնշյալ կառույցների գործունեության մասին;
- Նմանօրինակ հետագա հարցումների արդյունքների հավաստիության աստիճանը մեծացնելու նպատակով, շահախնդիր առաջադիմող ուսանողներից և մագիստրանտներից, ընթացիկ ուսումնական տարում ձևավորել սոցիոլոգիական խումբ;
- Հարցման արդյունքների հիման վրա մասնաճյուղում իրագործված ցանկացած անդրադարձ, դրանից ստացված արդյունք դարձնել լայն իրազեկման առարկա, ինչը կբարձրացնի սոցիոլոգիական հարցումների հեղինակությունը և կնպաստի առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի պահպանմանն ու զարգացմանը:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին